# ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ

*Երեւան, 23 օգոստոսի* – Հայաստանի սահմանամերձ տարածքներում հաճախակի կրկնվող ադրբեջանական ռազմական ոտնձգությունների շարունակական տեղաշարժերը մշտապես լարվածության մեջ են պահում հայ-ադրբեջանական ամբողջ սահմանային հատվածը: Չբավարարվելով անցած երկու օրերին Կրասնոսելսկի եւ Տավուշի շրջանների գնդակոծումներով, հակառակորդն այս անգամ ռազմական թիրախ է ընտրել Իջեւանի սահմանագիծը: Ինչպես տեղեկացրել է ՀՀ պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունը, օգոստոսի 22-ի երեկոյան ադրբեջանական բանակի ռազմական կազմավորումները զենքի գրեթե բոլոր տեսակներից չորս ժամ շարունակ կրակի տակ են առել Իջեւանի Կիրանց գյուղը եւ գյուղի պաշտպանական դիրքերը: Ռազմական գործողությունների հետեւանքով կան տուժածներ: Հայաստանի սահմանապահ ուժերը հարկադրված դիմել են պատասխան գործողությունների: